բունի հարսի գլուխը խոնարհեցնում է. այսպիսի ամուսիններից ինչ երջանիկ օրեր է սպասուելու, թող ինքն ընթերցողը եզրակացնէ: Այս անկարգութեանց առաջքն առնելու համար եւս Վեհ. Կաթուղիկոսը դարձրեց իւր խորին ուշադրութիւնը, եւ կանոնները որոշ որոշ կանոնական կոնդակով առաջարկեց ուր հարկն է, որք տպուեցան եւ Արարատում: Այսուհետեւ կը զգուշանա՞ն արդեօք մեր քահանաները, այդ փորձը ցոյց կը տայ:

(Մ-ոյ-ն է յ-ե-ր-ի-ս)

ԵՆՈՎՔ ՍԱՐԿԱՒԱԳ ՄՈՎՍԷՍԵԱՆ.

ԱԶԳԱՅԻՆ

ՆՊԱՍՏ Ի ՇՈՒՇԻՈՑ.

Շուշեցի մեր սիրելի ազգայիններէն մի քանի անձինք ի ձեռն Երժ. Խորէն Վարդապետ Ստեփանէի 500 ռուբլ. նուիրեցին ի նպաստ Ն'եմարանի Մայր Աթոռոյս:

Մեծաւ և հրապարակական շնորհակալութեամբ կգովեմք մեր բարեպաշտ եղբարց այսպիսի նուիրաբերութեան առթիւ յայտնած բարեղգաց եռանդը և նպատակը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ.

Երժ. Յովհաննէս Վարդապետ Երեմեան Տաթեւու Վիճակին Փոխանորդ կարգեցաւ ի տեղի Երժ. Ստեփան Վարդապետի Մխիթարեանց, որում ուրիշ կարեւոր պաշտօն պիտի յանձնուի:

Ի ԿԱԼԿԱԹԱՅԷ.

Ի Կալկաթայէն ստացեալ թղթակցութիւններ կհաղորդեն, որ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս Ն. Նուիրակն Հայոց Վիճակին Հնդկաստանի՝ Կալկաթայի Անգղիական Գեր. Արքեպիսկոպոսի հետ ի միասին՝ ի 16/28ն անցեալ Դեկտեմբեր ամսոյ՝ ներկայանալով Անգղիոյ Գահաժառանգ Ալպերտ Էդուարդ մեծ Իշխանին՝ արժանաւոր սիրով մեծարուել է:

Նաեւ ի դիմաց Վեհ. Արքային Պիրմանստանի երկու պատգամաւոր ի Կալկաթա եկած լինելով Անգղիական գահաժառանգ մեծ իշխանին գալուստը շնորհաւորելոյ համար, նոքա կայցնեն Պիրմանի արքային անհամբեր սպասելը մեր Վեհ. Հայրապետի գրութեան համաձայն՝ նորին Գերապատուութեան ի Մանդալէա մայրաքաղաք գալուն, և ժամադիր լինելով՝ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս՝ տարւոյս անցեալ Յունվար ամսոյ վերջերում դէպ ի Մանդալէա մայրաքաղաքն ճանապարհորդելոյ պատրաստուեր է: — Մանդալէա ի Կալկաթայէ 900 մանգուն՝ անտի 900 կամ Հավա գետոց վերայ 25 օրի չափ նաւարկելով՝ և

կի ժամանակ և հարցումների ժամանակ հարսի գլուխը միշտ վայր խոնարհեցնում. այս կինը կոչվում է հ-ա-ն-ե-ց-ր:

Հավայէն ևս 4—5 ժամ ընդ ցամաք հեռաւորութիւն ունի։

Ի ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԷ.

Լոնդոնեան Արքեպ. Ամենայն.

Հասարակաց պարտք է զերախտիս երախտաւորաց ճանաչել և զբարի գործս նոցա ի հոչակ հանել, քանի՞ առաւել ապա և մեզ ըղձալի է ի լուութեան չթողուլ առաքինական գործս Մեծապատիւ և Ազգասէր երեցփոխանի սուրբ Աստուածածնայ Եկեղեցւոյ մերոյ Յովհաննէսի Մարկոսեան Փոփով։

Ա.—Սոյն սա յետ ընդունելոյ զպաշտօն երեցփոխանութեան յամսեանն Մայիսի 1874 ամի, սկսաւ զամենայն ջան ի գործ դնել՝ ձեռնամուխ լինել նորոգութեան և բարեզարդութեան եկեղեցւոյն, զորս ինքնին սկսեալ էր անդ յառաջին յամսն երեցփոխանութեան իւրում, է զի՝ մասամբ նուիրատուութեամբ ժողովրդականաց ոմանց, և է զի՝ մասամբ մեծաւ ի սեպհականութենէ իւրմէ հոգալով, և ի ներկայ ժամանակիս զարդարեաց և շքեղացոյց այնպէս՝ որպէս վայելէ Տաճարի Աստուծոյ, մինչ զի ամենայն տեսանողք թէ ի մերազնէից և թէ յօտարականաց հիանան ընդ ներքին գեղեցկութիւն նորին. իսկ յիշեալ ազգասէր և բարեպաշտ երեցփոխանն ոչ բաւական համարելով զայսչափ բարեզարդութիւն եկեղեցւոյն՝ մտադիր է ևս քան զևս զարդարել ի ներքուստ և արտաքուստ, չհայելով ի ծանրութիւն աշխատութեանն, մանաւանդ գոլով ինքն հասեալ ի ծերութեան հասակ՝ և ենթակայ լինելով բազմադիմի պաշտօնակատարութեանց ի քաղաքիս և յայլուր, և դարձեալ չինայէ զսեպհական դրամս իւր ի բարեզարդութիւն Տանն Աստուծոյ։

Բ.—Հոգևոր Ծխական Դպրոցն Եկեղեցւոյս՝ որ բացեալ է ի 1867 ամի համաձայն կամաց Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ազգիս, և գտանի ի գաւթի Եկեղեցւոյն, ուր ուսանին այժմ քառասուն աշակերտք, և այնոքիկ մասամբ մեծաւ յորդւոց չքաւոր աղքատաց քաղաքիս, և խնամով յիշեալ ազգասէր երեցփոխանի ի մատակայ աւուրս գտանի Դպրոցն այն յոչ սակաւ բարեկարգութեան, այս ինքն՝ ունելով զմի հայ ուսուցիչ Հայոց լեզուի և Կրօնագիտութեան, զմի ուսուցիչ Ռուսաց լեզուի և Թուաբանութեան, և զմի վերակացու, որ և ի ներկայութեան յարլոյ Հոգաբարձուաց Դպրոցին խոստացաւ և յանձն էառ զամենայն ներքին ծախս Դպրոցին, և զպէտս չքաւոր աշակերտաց հոգալ ի ի սեպհականութենէ իւրմէ, առանց ի գործ դնելոյ ի նմին զեկեղեցական արդիւնս։

Գ.—Մեծապատիւ երեցփոխանն յայսմ ամի դնելով ի սեպհական դրամցն զլայնատարած պարապարդ տեղի մի՝ որ գտանի հանդէպ Եկեղեցւոյն սուրբ Աստուածածնայ և պատրաստի ունելով արդէն զամենայն նիւթս շինուածոյն, յառաջիկայ գարնան ունի կառուցանել ի վերայ Նորա նոյնպէս ի սեպհականութենէ իւրմէ զմի —ԷՐԻ—ՀԷՐ հիւանդանոց աղքատաց, և ունի զայն կանոնաւոր եղանակաւ մշտնջենաւորապէս ապահովել ի գումարաց իւրոց։

Ուստի բարեմաղթեմք առ Բարձրեալն Աստուած շնորհել փերոյիշեալ ազգասէր և բարեպաշտ երեցփոխանի մերոյ Մեծապատիւ Յովհաննէսի Մարկոսեան Փոփով կեանս երկարս և փոխարինումն աշխատութեանց Նորին հատուցանել ասա և ի հանդերձելումն։

Տար Աստուած, որպէս զի այսօրինակ առաքինի, ազգասէր և բարեպաշտ անձինք օր քան զօր բազմանային ի մէջ Ազգիս մեր յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեայց։

Ե. Բ. Ս.

15 Դեկտեմբ. 1875 —ի.

Ի ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆ.

Կյուսամք որ յիշեալ Պարոնն Նոր-Նախիջևանայ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Օրս. Դպրոցի ապահովութեան և մշտնջենաւոր յարատևութեան համար ևս առաւել խնամք կատանի և մշտընջենաւոր եկամուտներ կյատկացնէ ի բարի յիշատակ անուան իւրոյ։